ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

Քաղ. Երևան 30 սեպտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը, գործելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի, 69-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի հիման վրա, մասնակցությամբ դատավորներ Վ. Գրիգորյանի (նախագահող), Ա. Դիլանյանի և Ա. Թունյանի, քննության առնելով Սուրեն Ավետիսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Սուրեն Ավետիսյանը 2020 թվականի օգոստոսի 26-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ, 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 199-200-րդ, 362-րդ, 380-րդ, 381-րդ և 382-րդ հոդվածները ՀՀ Սահմանադրության 1, 3, 23, 29, 62, 63 հոդվածներին ճանաչել հակասող և անվավեր»:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատական կազմի նախագահողի միջնորդությունը՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով սույն դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Դիմողը հայտնել է, որ իր կողմից 2019 թվականի դեկտեմբերի 16-ին ընդհանուր իրավասության դատարան ներկայացրած հայցադիմումը վերադարձվել էր դրանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ բռնագանձելու հաշվարկի սկզբնաժամկետը՝ կետանցի օրը, և նույն հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկը դատարան ներկայացված չլինելու հիմքով: Նշված թերացումը դիմողի կողմից ուղղվելուց և հայցադիմումը դատարան ներկայացվելուց հետո նույն դատարանն այլ կազմով 2020 թվականի հունվարի 13-ին հայցադիմումի ընդունումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ նույն կողմերի միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: Այս հանգամանքը, ըստ դիմողի կողմից

վիճարկվող իրավանորմի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք է ծառայել ընդհանուր իրավասության դատարանի համար:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանում իր վերաքննիչ բողոքի քննության ընթացքում դատարանը, ըստ դիմողի, անտեսել է այն հանգամանքը, որ ընդհանուր իրավասության դատարանը ոչ միայն չէր կարող կիրառել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթները, այլ պարզապես պետք է ուսումնասիրության առարկա դարձներ այն հանգամանքը, թե շտկվել են արդյոք դիմողի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին 2019 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ արձանագրված թերությունները, և այդ պահանջը պահպանված լինելու դեպքում հայցադիմումն ընդուներ վարույթ: Դիմողի պնդմամբ՝ քաղաքացիական վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ թերությունը շտկելուց հետո կրկին ներկայացված հայցադիմումը ստանալով՝ այլ կազմով նույն դատարանը արձանագրել է իր հայցադիմումի վարույթ ընդունելն այլ հիմքով մերժելու որոշում, իրեն զրկել է դատական պաշտպանության իրավունքից:

Դիմողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող մյուս դրույթների Սահմանադրությանն անհամապատասխանության վերաբերյալ իրավական հիմնավորումներ չի ներկայացրել:

3. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով դիմումը և դրան կից դիմողի ներկայացրած նյութերն ու հիմնավորումները, գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի մասով

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը նշյալ դրույթների մասով բարձրացրել է դրանց կիրառման իրավաչափության հարց: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի Սահմանադրությանը անհամապատասխանության վերաբերյալ դիմողի իրավական հիմնավորումների առանցքում նշված նորմերի կիրառման իրավաչափության բացն է: Այսինքն՝ այն, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը չէր կարող կիրառել դրանք, այլ պետք է միայն ուսումնասիրեր, թե արդյո՞ք դիմողը վերացրել է 2019 թվականի դեկտեմբերի 16-ի ընդհանուր իրավասության դատարանի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ արձանագրված թերությունները: Այսինքն՝ դիմողը քննարկման առարկա է դարձրել ընդհանուր իրավասության դատարանի կողմից վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարցը վերջիններիս ենթադրյալ հակասահմանադրականության լույսի ներքո:

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ եթե դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր այս՝ նախկինում արտահայտած դիրքորոշումը նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով: Հետևաբար՝ սույն դիմումով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրականության ստուգման մասով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

3.2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 302-րդ, 362-րդ, 380-րդ, 381-րդ և 382-րդ հոդվածների մասով

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Միաժամանակ, դիմողը պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր ո՞ր սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանա-

դրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշյալ դրույթների մասով դիմողը չի պահպանել վերոշարադրյալ օրենսդրական պահանջները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 302-րդ, 362-րդ, 380-րդ, 381-րդ և 382-րդ հոդվածների սահմանադրականության ստուգման պահանջի մասով անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, որի հիմքով և դիմումի այդ մասի քննությունը նույնպես ենթակա է մերժման:

Հետեւաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Սուրեն Ավետիսյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Դատավորներ՝

30 սեպտեմբերի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-48